

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 1-ից օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ արդարադատության նախարարության իրականացրած աշխատանքների վերաբերյալ

Ճանապարհային երթևեկության ոլորտի իրավախախտումներին առնչվող ՀՀ կառավարության 2014 թ-ի ծրագրով նախատեսված խնդիրներն, ինչպես նաև տեսանկարահանող սարքերի միջոցով վարչական պատասխանատվության ենթարկելու համար հասարակության շրջանում առաջացած դժգոհությունները լուծելու համար ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ:

Արդյունքում 2014թ-ի հունիսի 21-ին փոփոխություններ են կատարվել «ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում և նվազեցվել են ճանապարհային երթևեկության կանոնների հաճախակի խախտումների համար սահմանված տուգանքների չափերը՝ հաշվի առնելով վարչական տուգանքների չափերի անհամաչափությունը վարչական իրավախախտման հանրային վտանգավորության աստիճանին:

- Նախատեսվել է վարչական պատասխանատվությունից ազատվելու հնարավորություն՝ տեսանկարահանման սարքերի միջոցով ամրագրված նվազ նշանակություն ունեցող վարչական իրավախախտման դեպքում:
- Օրենքը տարբերակված մոտեցում դրսևորեց հանրային տրասնպորտային միջոցներ վարողներին ծխելու համար պատասխանատվության ենթարկելիս՝ սահանելով ավելի բարձր տուգանք:

Հանրային իրավական դրամական պահանջների կատարում և վարչական ակտի հանձնում

ՀՀ արդարադատության նախարարության կողմից չափազանց կարևոր է համարվել ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների և այլ վարչական իրավախախտումների հետևանքով ՀՀ քաղաքացիների նկատմամբ կիրառված վարչական տույժերի գանձման հիմքով հարուցված կատարողական վարույթներով բանկային հաշիվների արգելափակման վերաբերյալ խնդիրը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ խնդիրը պայմանավորված է առանձին բանկերի ներքին բանկային գործառույթներով:

Մասնավորապես՝ բանկերը չունենին համակարգչային ծրագրեր, որոնք հնարավորություն կտային արգելանքի տակ դնել իրենց հաճախորդի բանկային հաշիվը՝ միայն կատարողական թերթում նշված գումարի չափով: Պրակտիկայում և տեսականորեն, խնդիրը ԴԱՀԿ տիրույթում չէր:

ԴԱՀԿ գործունեությունն ապահովող համակարգչային ծրագիրը նախատեսում է պահանջ հարկադիր կատարողի համար, այն է՝ կատարողական փաստաթղթում պարտադիր լրացնել բռնագանձման ենթակա գումարի չափը: ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի համագործակցության արդյունքում որոշակի լուծումներ են մշակվել:

Խնդիրը կարգավորելու նպատակով մշակվել են նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքներում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծեր, որոնք **որոշ դեպքերում նախատեսում են դատական ընթացակարգեր՝ հանրային իրավական դրամական պահանջների կատարման համար**, երբ, հանրային իրավական դրամական պահանջի կատարման արդյունքում անձը կարող է զրկվել միակ բնակության վայրից կամ կատարման ենթակա դրամական պահանջներն անձի համար էական են (նախագծով նախատեսվել է ստորին շեմ՝ 200000 ՀՀ դրամը գերազանցող գումարի չափով):

Նախագծով սահմանվել է՝ վարչական ակտը չի կարող դառնալ անբողոքարկելի, եթե անձն այն **չի ստացել**: Հստակեցվել է նաև վարչական ակտը **հանձնված համարվելու սահմանումը**:

Ցմահ ազատագրկման դատապարտված անձանց խնդիրներ

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում ներկայում կա ցմահ ազատագրկման դատապարտված 104 անձ: Այդ անձանց իրավունքների ապահովման, քրեակատարողական հիմնարկներում նրանց պահման պայմանների հետ կապված խնդիրները գնտվում են նախարարության ուշադրության կենտրոնում: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է նրանց պահման պայմաններին, գործնականում դատապարտյալներին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի արդյունավտությանը, դատապարտյալներին պահելու ուղղիչ հիմնարկների տեսակների փոփոխության ժամկետներին ու ընթացակարգին, ցմահ ազատագրկման դատապարտվածներին այլ դատապարտյալներից անջատ պահելուն և այլն:

Միջազգային փորձի և ոլորտի միջազգային չափանիշների հիման վրա հիշյալ խնդիրներին տալ օրենսդրական և գործնական արդյունավետ լուծումներ: Խոսքը հատկապես վերաբերում է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու կառուցակարգերի կատարելագործմանը, ազատման համար օրենքով առավել օպտիմալ ժամկետներ նախատեսելուն, դատապարտյալների իրավունքների իրականացման գործուն միջոցներ սահմանելուն նրանց նկատմամբ տույժի միջոցներ կիրառելիս և այլն: Ցմահ ազատագրկվածների խնդիրները վեր հանելու և օրենսդրական փոփոխություններ նախատեսելու կարևոր նշանակություն ունեցավ ցմահ ազատագրկված Կարեն Բոյաջյանի դեպքը: Նրա առողջական խնդիրները պարզելու համար կազմակերպվել է քաղաքացիական

հոգեբուժարանում դատապարտյալի առողջության փորձաքննության անցկացումը, որից հետո նա տեղափոխվել է «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ:

Քրեակատարողական համակարգի գերբեռնվածության խնդիրը լուծելու, ձերբակալված, կալանավորված անձանց, պատիժը կրող դատապարտյալների պահման պայմանները բարելավելու նպատակով Արմավիրի քրեակատարողական հիմնարկի 400 անձի համար նախատեսված շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել և շենքը շահագործման հանձնել 2014 թ-ի սեպտեմբերի վերջին: Զուգահեռ նախատեսվում է ևս 400 անձի համար մասնաշենքի կառուցումը:

Լուծվել են քրեակատարողական համակարգի բուժական անձնակազմի վերապատրաստման խնդիրները: Միջազգային գործընկերների հետ մշակվում է քրեակատարողական համակարգի բուժական ծառայության նոր մոդելը:

Ստեղծվել է ՀՀ արդարադատության նախարարին կից հանրային խորհուրդ

ՀՀ Արդարադատության նախարարի 2014 թ-ի մայիսի 3-ի հրամանով ստեղծվել է ՀՀ արդարադատության նախարարին կից հանրային խորհուրդ (Խորհուրդ): Դրա հիմնական նպատակը հասարակության տարբեր շերտերի կարծիքներն ու տեսակետները հասու դարձնելու միջոցով ՀՀ արդարադատության նախարարության առջև դրված խնդիրներն ու գործառույթներն արդյունավետ իրականացնելուն աջակցելն է: Խորհրդի կազմում ընդգրկված են ոլորտում գործող քաղաքացիական հասարակության ինստիտուտների 29 ներկայացուցիչներ, հեղինակավոր և ճանաչված հասարակական գործիչներ՝ Արամ Աբրահամյան, Տիգրան Լիլոյան, Արտակ Զեյնալյան, Արթուր Սաքունց, Ավետիք Իշխանյան, այլք:

2014 թ-ի հուլիսի 18-ին անցկացվել է Խորհրդի առաջին նիստը: Քննարկվել են պրոբացիոն ծառայության ներդրման իրավական նախադրյալները և գործունեության հիմնական ուղղություններն, ինչպես նաև պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի հիմնախնդիրներն ու բարեփոխումների ուղղությունները: Խորհրդի նիստերը դռնբաց են:

ՀՀ Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ

ՀՀ կառավարության 2014 թվականի ծրագրային խնդիրներից քրեական վարույթի ընթացքում անձի իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդումն ապահովող կանոնակարգումներ նախատեսվել են ՀՀ Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում: Այն ՀՀ Ազգային ժողովում ստացել է Պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունը և ընդգրկված է նիստերի օրակարգում: Հանձնաժողովում օրենսգրքի նախագծի քննարկման արդյունքներով նախատեսվում է կատարել մի շարք փոփոխություններ, որոնք վերաբերում են խափանման

միջոցների համակարգին, դրանց կիրառության հիմքերին և ընացակարգերին, մինչդեռ տական վարույթում դատարանի դերին և այլն

ՀՀ Քրեական նոր օրենսգիրք

ՀՀ նոր Քրեական օրենսգրքի հայեցակարգն ամբողջականացվել է, կազմվել է հայեցակարգի հիմնավորումը և հաստատելու համար ներկայացվել է ՀՀ կառավարությանը: Նախատեսվում է, որ հայեցակարգը հաստատելու մասին որոշումը Կառավարությունը կարող է ընդունել Սեպտեմբերին: ՀՀ արդարադատության նախարարի հրամանի հիման վրա ստեղծված աշխատանքային խմբի վրա դրված է պարտականություն մշակել օրենսգրքի նախագծի տեքստը և այն հաջորդ տարվա ամռանը ներկայացնել նախարարություն:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի(Ծրագիր) իրականացում

2014թ. հունիսի 30-ին ՄԱԿ-ի երևանյան գրասենյակում Ծրագրի պաշտոնանական մեկնարկին ՀՀ արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանը կարևորել է ծրագիրը որպես ոլորտում միասնական և համակարգված քաղաքականության իրականացման կարևորագույն գործիք:

ՀՀ ԱՆ-ի կողմից իրականացվել են Ծրագրի VIII-րդ («Խոշորանգաման կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունք»-ը) գլխի մի շարք միջոցառումներ և դրանց արդյունքներն օգտագործվել են ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի նախագծման աշխատանքներում և ՀՀ Քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ իրականացնելու համար: Մասնավորապես, ուսումնասիրվել է միջազգային փորձը՝

- ազատագրկման վայրերում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացքն ապահովող անկախ ընթացակարգերի վերաբերյալ,
- հարցաքննությունների տեսաձայնագրման վերաբերյալ,
- անձի՝ իրենից խոստովանությունը խոշտանգումների միջոցով ստանալու վերաբերյալ հիմնավոր պնդման արդյունավետ քննություն (վարույթի կասեցման հնարավորություն նախատեսելով) իրականացնելու վերաբերյալ,
- քրեակատարողական հիմնարկներում հացադուլ իրականացնող անձանց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ:

Ռազմավարության մեկ այլ միջոցառման կատարման, այն է՝ **արդարադատության մատչելիության իրավունքի իրականացման նպատակով հասարակության համապատասխան ներկայացուցիչների կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների, գործողությունների և անգործությունը վիճարկելու հնարավորություն ապահովելու** հարցի ուսումնասիրության արդյունքում մի շատ կակոր ինստիտուտ է ներդրվել ՀՀ իրավական համակարգ՝ **խմբային հայքը: Խմբային հայքերով խմբի անունից հայք հարուցելու և խմբի անդամ համահայքվորներին ներկայացնելու իրավունք** վերապահելու վերաբերյալ առաջարկը ՀՀ ԱՆ ներկայացրել էր ՀՀ ԱԺ պատգամավոր Էդմոն Մարուքյանը, որն ընդունվել էր՝ հաշվի

առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության և հասարակության կյանքում:

Պայմանավորվածություններ են ձեռք բերվել ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի (UNDP) հետ ուղղվածության որոշ միջոցառումների վերաբերյալ սեմինար-քննարկումներ կազմակերպելու վերաբերյալ:

«Կառավարության 2014 թ. ծրագրով **դատարանների անկախության և արդյունավետ գործունեության ապահովմանն** ուղղված ծրագրային խնդիրներն իրականացնելու առումով ուշագրավ են **«Հատական օրենսգրքում 2014 թ. հունիսի 10-ին և հունիսի 21-ին կատարված հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝**

Կատարված փոփոխությունը	Փոփոխության նպատակն ու արդյունքները
<ul style="list-style-type: none"> - ներդրվել է դատավորների գնահատման ինստիտուտը - սահմանվել են դատավորների գնահատման որակական և քանակական չափորոշիչները 	<ul style="list-style-type: none"> - բացահայտելու և դատավորներին մատնանշելու է իրենց աշխատանքի արդյունավետությունը բարելավելու ուղիները, - նպաստելու է դատավորների կողմից իրենց գործունեության վերլուծությանը և խթանելու ինքնավերլուծությունը - նպաստելու է դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակները կազմելիս լավագույն թեկնածուների ընտրությանը
<ul style="list-style-type: none"> - հստակ սահմանվել է դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի՝ նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում հասկացությունների բովանդակությունը - հստակեցվել են ակնհայտ և կոպիտ խախտումը գնահատելու չափանիշները 	<ul style="list-style-type: none"> - ապահովվելու է դատավորներին օրենքի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքով կարգապահական պատասխանատվության ենթարկելու պրակտիկայի միասնականությունը, - վերանալու է դատավորների կարգապահական վարույթի շրջանակներում տարատեսակ մեկնաբանությունների հնարավորությունը
<ul style="list-style-type: none"> - ներդրվել է դատական գործերի պատահական բաշխման համակարգը՝ ինչպես առաջին ատյանի դատարանների, այնպես էլ վերաքննիչ դատարանների և վճռաբեկ դատարանի համար 	<ul style="list-style-type: none"> - գործերը հավասարաչափ բաշխվելու են դատավորների միջև՝ հատուկ համակարգչային ծրագրի միջոցով՝ պատահական ընտրությամբ՝ հաշվի չառնելով գործերի մուտքագրման հերթականությունը և բացառելով սուբյեկտիվ մոտեցումները
<ul style="list-style-type: none"> - էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, ուսումնական հարցերի, ինչպես նաև դատավորների գնահատման հանձնաժողովները ձևավորվելու են ոչ թե դատարանների նախագահների խորհրդի 	<ul style="list-style-type: none"> - բարձրանալու է դատական իշխանության ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետությունը

<p>կողմից, այլ՝ դատավորների ընդհանուր ժողովի կողմից</p> <p>- դատարանների նախագահներն ու Արդարադատության խորհրդի անդամները չեն կարող ընդգրկվել գնահատման հանձնաժողովի կազմում:</p>	
<p>- ներդրվել է Արդարադատության խորհրդի անդամի հատուկ կարծիքի ինստիտուտը,</p> <p>- նախատեսվել է, որ նույն անձն ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ Արդարադատության խորհրդի անդամ ընտրվելու կամ նշանակվելու իրավունք չունի</p>	<p>- հնարավորություն է տալու Արդարադատության խորհրդի անդամին՝ շարադրելու Արդարադատության խորհրդում հարցերի քննության ժամանակ մեծամասնության հետ չհամընկնող իր դիրքորոշումը</p> <p>- կբարձրանա Արդարադատության խորհրդի գործունեության արդյունավետությունը</p>
<p>- դատավորի թեկնածուի համար նախատեսվել է 22-ի փոխարեն 28 տարվա նվազագույն տարիքային ցենզ</p>	<p>- կարևորվել է ոչ միայն թեկնածուի մասնագիտական փորձառությունը, այլև կյանքի համապատասխան փորձ ունեցող անձանց դատական իշխանության ոլորտ ընդգրկելը</p>
<p>- հատուկ կարգավորումներ են նախատեսվել՝ դատական վիճակագրության վարման առումով,</p> <p>- ներդրվել է դատական իշխանության կողմից իր գործունեության վերաբերյալ հաշվետվությունները հրապարակելու համակարգը,</p> <p>- նախատեսվել է այն նվազագույն վիճակագրական տեղեկատվության ցանկը, որն ենթակա է պարտադիր հրապարակման</p>	<p>- հավաքագրվելու է օբյեկտիվ վիճակագրություն,</p> <p>- ապահովվելու է հանրության առջև դատական իշխանության արդյունավետ հաշվետվողականությունը,</p> <p>- երաշխավորվելու է հանրության համար կարևոր տվյալների հրապարակումը</p>
<p>«ՀՀ դատական օրենսգրքում, ինչպես նաև հարակից այլ իրավական ակտերում կատարվել են այլ ուշագրավ էական փոփոխություններ և սահմանվել սկզբունքային կարգավորումներ, մասնավորապես, օրենքը՝</p> <p>- դատավորների ընտրության գործընթացում բացի դատավորներից նախատեսվել է ընդգրկել իրավաբան գիտնականների,</p> <p>- նախատեսվել է, որ նույն անձը միաժամանակ չի կարող կատարել քննական հարցերի մշակման, գնահատման և Արդարադատության խորհրդում հարցազրույցի վարման գործառույթներ,</p> <p>- քաղաքացիական դատավարությունում կատարելագործվել է պատշաճ ծանուցման կարգը, ընդլայնվել են դատական նիստի հետաձգման համար հիմք հանդիսացող հանգամանքները,</p> <p>- կատարելագործվել են վճռաբեկ բողոքին ներկայացված պահանջները՝ սահմանելով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի առկայությունը հնարավորինս մանրամասն հիմնավորելու պահանջը,</p> <p>- նախատեսվել է, որ վճռաբեկ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտում պարտավոր է մանրամասն հիմնավորել բողոքը վարույթ ընդունելու հիմքերը,</p> <p>- նախատեսվել է վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունված վճռաբեկ բողոքները տեղադրել պաշտոնական կայքում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում դռնփակ</p>	

Նոտարական համակարգ

ՀՀ կառավարության 2014 թ-ի ծրագրով նախատեսված նոտարների գույքային պատասխանատվության առավել արդյունավետ համակարգ ներդնելու միջոցառումն իրականացնելու նպատակով մշակվել է ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի «Նոտարիատի զարգացման հայեցակարգ» N 53 արձանագրային որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին նախագիծը, որի նպատակը նոտարների գույքային պատասխանատվության և պատասխանատվության ռիսկի ապահովագրության, նոտարական գործողությունների սակագներին առնչվող խնդիրների լուծումն է:

Ներկայում նոտարի նյութական պատասխանատվությունը սահմանափակված է նրա կողմից դիտավորյալ հասցված վնասի փոխհատուցմամբ: Հայեցակարգի փոփոխությունների նախագիծը նախատեսել է նոտարի գույքային պատասխանատվություն նաև նրա կողմից անզգուշությամբ հասցված վնասի համար:

Նոտարիատում լիարժեք հնքնակառավարման համակարգ ունենալու նպատակով ՀՀ նոտարական պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծ է պատրաստվել, որով ձեռնարկվել են քայլեր՝ նոտարական համակարգի հնքնակառավարումն ամրապնդելու և զարգացնելու ուղղությամբ՝ տալով մեծ ֆինանսական հնքնուրույնություն ՀՀ նոտարական պալատի վարչությանը և նոտարների ընդհանուր ժողովին, ավելացնելով էթիկայի հանձնաժողովի անդամների քանակը, ստեղծելով նոտարական պրակտիկայի և վերապատրաստման հարցերով հանձնաժողով, որը մշակելու և ՀՀ ԱՆ է ներկայացնելու նոտարական գործունեության վերաբերյալ իրավական ակտեր, մեթոդական ձեռնարկներ:

«Էլեկտրոնային նոտար» համակարգի ներդրումն և նոտարական գործողությունները «մեկ պատուհանի» սկզբունքով իրականացնելու աշխատանքները շարունակվում են՝ ներկայումս աշխատանքներ են ընթանում ՀՀ ԿԱ ոստիկանության և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից վարվող էլեկտրոնային գրանցումների և էլեկտրոնային նոտարիատի համակարգի միջև ծրագրային համակցում ստեղծելու ուղղությամբ:

Ուշագրավ զարգացումներ նախատեսող և նոր ինստիտուտներ ներդնող

այլ օրենքներ և օրենքների նախագծեր

ՀՀ ԱՆ-ի կողմից հաշվետու ժամանակահատվածում մշակվել է 35 իրավական ակտի նախագիծ:

- ՀՀ ԱԺ կողմից 2014թ. մայիսի 19-ին ընդունված «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով ներդրվել է ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և ՀՀ սահմանադրական դատարանի 2013թ. նոյեմբերի 5-ին թիվ 1121 որոշման իրավական դիրքորոշումների հիման վրա՝ նախատեսելով փոխհատուցում եվրոպական կոնվենցիայի 2-րդ (կյանքի իրավունք), 3-րդ (խոշտանգման արգելք) կամ 5-րդ (ազատության իրավունք) հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտման համար և 7-րդ արձանագրության 3-րդ հոդվածի (սխալ դատապարտում և դատական սխալ) հիման վրա:

ՀՀ սահմանադրական դատարանի համապատասխան որոշման հիման վրա նախատեսվում է լրամշակել այդ նախագիծը, և քննարկվում է նոր ներկայացվող նախագծում ներառել վերը հիշատակված հոդվածների շրջանակն ընդլայնելու, հատուցման չափերը փոփոխելու հարցերը:

- 2014 թվականի հունիսին ընդունված «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն սեպտեմբերի 30-ից ՀՀ արդարադատության նախարարությունում գործելու է քաղաքացիական կացության ակտերի գրանցման միասնական էլեկտրոնային կառավարման համակարգ, որով ՔԿԱԳ վերաբերյալ դիմումները կմուտքագրվեն ու ակտերը կգրանցվեն էլեկտրոնային եղանակով:

- 2014 թվականի հունիսի 21-ին ԱԺ կողմից ընդունվել է ՀՀ ԱՆ-ի կողմից մշակված «Պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» ՀՀ օրենքը:

Նախագծեր

- ՀՀ Արդարադատության նախարարի հրամանով 2014 թ. հունիսի 13-ին ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ մշակելու նպատակով:

▪ Մշակվել է «Շարժական գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենք, որը նախատեսում է անշարժ չհամարվող ցանկացած շարժական գույք, բացառությամբ՝ արժեթղթերն ու դրամական միջոցները, դնել որպես գրավ՝ ստեղծվելիք էլեկտրոնային միասնական ռեգիստրի միջոցով: Սա նպաստելու է փոքր և միջին ձեռնարկություններին և Համաշխարհային բանկի կողմից մշակված «Doing Business»-ի չափանիշներով Հայաստանի առաջխաղացմանը:

▪ Մշակվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով նախատեսվում է դատարանի և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև փաստաթղթաշրջանառությունը իրականացնելու համար ստեղծել էլեկտրոնային կառավարման համակարգ:

▪ Օրենքի նախագծով նախատեսվել է, որ վարչարարություն իրականացնելու լիազորություններ կարող են վերապահվել նաև պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին և պետական ու համայնքային հիմնարկներին:

▪ Մշակվում է «Անհատական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծ, որի նպատակը պետք է լինի անձանց պաշտպանությունն այն չարաշահումներից, որոնք կարող են տեղ գտնել անհատական տվյալների հավաքման կամ մշակման ժամանակ:

▪ Մշակվում է Հայաստանի Հանրապետությունում պրոբացիոն ծառայություն ստեղծելու հայեցակարգը:

Համագործակցությունը Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի (CPT) հետ

ՀՀ Արդարադատության նախարարությունը կարևորում է համագործակցությունը Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի հետ: Նախարարության կողմից անհապաղ միջոցներ են ձեռնարկվել Կոմիտեի Հայաստան կատարած վերջին այցի (2014թ. մայիս) շրջանակներում ազատությունից զրկված անձանց պահելու պայմանների, նրանց հետ վատ վերաբերմունքի կանխարգելմանն ուղղված Կոմիտեի առաջարկությունների կատարման վերաբերյալ: Արդյունքների մասին տեղեկացվել է Կոմիտեի քարտուղարություն: Ձեռնարկված միջոցներն արժանացել են դրական գնահատականի:

ՀՀ ԱՆ-ն մշակում է ՀՀ Քրեակատարողական օրենսգրքում փոփոխությունների նախագիծ, որն ուղղված է Կոմիտեի առաջարկությունների կատարմանը: Այդ նախագծի նախնական տարբերակը նույնպես ուղարկվել է Կոմիտե: Ավելին, նախարարությունում ստեղծվել է բաժին, որի հիմնական խնդիրներից է Կոմիտեի իրավական չափանիշների ներդրումը Հայաստանում:

Մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ համակարգի ստեղծում

ՀՀ ԱՆ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) հետ կապերի վարչության կառուցվածքում ստեղծվել է նոր բաժին, որը զբաղվելու է ՄԻԵԴ-ի վճիռների կատարմամբ և եվրոպական իրավական չափանիշները հայկական իրավական համակարգ ներդնելով: Այս բաժինը պատասխանատու է լինելու նաև Եվրոպայի Խորհրդի մարդու իրավունքների չափանիշների հիման վրա նոր օրենքների մշակման, ինչպես նաև ՄԻԵԴ-ի իրավական պրակտիկայի ներդրման համար:

Իրավական ակտերի փորձաքննություն	
ՀՀ ԱՆ Իրավական ակտերի փորձաքննության գործակալության կողմից պետական փորձագիտական եզրակացություն է ներկայացվել	<ul style="list-style-type: none"> ▪ 124 օրենքների նախագծերի, ▪ 36 ընդունված օրենքների, ▪ ՀՀ Նախագահի 2 նորմատիվ և անհատական հրամանագրերի նախագծերի, ▪ ՀՀ կառավարության 224 նորմատիվ և 132 անհատական որոշումների նախագծերի, ▪ ՀՀ վարչապետի 2 նորմատիվ և 124 անհատական որոշումների նախագծերի, ▪ ՀՀ կառավարության 28 արձանագրային որոշումների նախագծերի
պետական գրանցում են ստացել	135 գերատեսչական նորմատիվ ակտեր
կատարվել է	678 տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի փորձաքննություն
Միջազգային պայմանագրերի փորձաքննություն	
միջազգային պայմանագրերի տեքստերի վերաբերյալ տրամադրվել է	32 կարծիք
միջազգային պայմանագրերի և ՀՀ օրենսդրության միջև հակասությունների առկայության կամ բացակացության մասին տրվել է	16 տեղեկանք
ՀՀ ԱՆ-ի կողմից կարգապահական վարույթ հարուցվել է 5 դատավորի նկատմամբ:	

Միջազգային համագործակցություն

Կազմակերպվել են ՀՀ արդարադատության նախարարի և օտարերկրյա պետությունների պատվիրակությունների միջև պաշտոնական հանդիպումներ, մասնավորապես, Լիտվայի Հանրապետության և ԱՄՆ արտակարգ ու լիազոր դեսպանի, ԱՄՆ սենատոր տիկին Սյուզան Չան Օքլանդի, ՄԱԿ-ի Փախստականների գերագույն հանձնակատարի, ԵԱՀԿ գրասենյակի Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, Եվրոպայի Խորհրդի Երևանյան գրասենյակի ղեկավարների հետ:

ՀՀ Արդարադատության նախարարը բավարարել է Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանի խնդրանքը՝ այդ երկրի ութ քաղաքացիների պատժի մնացած մասը կրելու նպատակով Հայաստանի Հանրապետությունից ԻԻՀ փոխանցելու վերաբերյալ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարան է ներկայացվել իրավական դիրքորոշումներ Հայաստանի Հանրապետության դեմ Եվրոպական դատարան ներկայացված 12 գանգատներով:

Մարզային այցելություններ

ՀՀ Արդարադատության նախարարն այցելել է Վայոց Ձոր և Սյունիք՝ մարզի բնակիչների ու նախարարության մարզային կառույցների խնդիրներին տեղում ծանոթանալու և դրանց լուծում տալու նպատակով:

Լրատվամիջոցների հետ աշխատանք

ՀՀ արդարադատության նախարարն ու թիմը չի հետևել 100 օր լռություն պահպանելու սկզբունքին և նշանակման օրվանից մինչ օրս ակտիվորեն համագործակցել է զանգվածային լրատվության միջոցների հետ:

Նրանց հետ համագործակցության արդյունքում մամուլում տեղ է գտել ութ տասնյակից ավելի հրապարակումներ: